Արձանագրություն N 2
ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/44 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

18.12.2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Ահարոնյանը, Գ. Մեհրաբյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. **«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/44» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 17.12.2018 թվականին ներկայացված պարզաբանմանը պատասխանելու վերաբերյալ**

(Ա. Խաչիկյան)

Պարզաբանման պահանջի տեքստ.
Հարգելի գործընկեր Ապրանքի մատակարարման ժամկետը ըստ պայմանագրի Հավելված 1-ի նշված է. <ՆԱԽԸՆՏՐԵԼԻ> ժամկետ՝ պայմանագիրն /համաձայնագիրն/ ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրացուցային օրը": Արդյոք սա նշանակում է, որ մեր կողմից կարող է առաջարկվել այլ մատակարարման ժամկետ?

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Պարզաբանում տրամադրելու տեքստ.
Հարգելի գործընկեր ապրանքի մատակարարման ժամկետը ըստ պայմանագրի Հավելված 1-ի նշված նախընտրելի ժամկետ եզրույթը սահմանվում է այն դեպքում, եթե գնման ընթացակարգը հայտարարվում է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ, սակայն հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ենթակետի «ը» պարբերությունը, հրավերում հստակ սահմանված է, որ ապրանքը պետք է մատակարարվի պայմանագիրն /համաձայնագիրն/ ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրացուցային օրը, ուստի դա չի կարող դիտվել առաջարկվող ապրանքի մատակարարման նոր ժամկետ սահմանելու հնարավորություն:
Միաժամանակ տեղեկացնում եմ, որ անհրաժեշտության դեպքում, պայմանագիր (համաձայնագիր) կնքելուց հետո պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել միայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջի առկայության դեպքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Խաչիկյան
Անդամներ՝ ---------- Հ. Ահարոնյան
---------- Գ. Մեհրաբյան
Քարտուղար՝ ---------- Գ. Մուրադյան